RUMELS MANAGEMENT SOLUTIONS

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 1-ԻՆ. ԵՌԱՄՍՅԱԿ 2021 թ.

Բովանդակություն

- Ներածություն 3
- Զուտ շահույթ 4
- Ընդհանուր ակտիվներ 5
- Վարկային ներդրումներ 7
- Ընդհանուր պարտավորություններ 9
- Ավանդներ և պարտատոմսեր 10
- Ընդհանուր կապիտալ 12

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտության նպատակն է վերլուծել Հայաստանի բանկային համակարգի հիմնական ֆինանսական ցուցանիշները՝ 2021 թ. 1-ին եռամսյակի համար:

Հետևյալ ցուցանիշներն են վերլուծվել

- Ընդհանուր ակտիվները, պարտավորությունները և կապիտալը,
- Վարկային ներդրումները,
- Հաճախորդներից ներգրավված ֆինանսական միջոցները, ինչպես նաև թողարկված պարտատոմսերի մնացորդները:

Հետազոտության հիմք են հանդիսացել Հայաստանի բանկերի կողմից հրապարակված ֆինանսական հաշվետվությունները:

Զուտ շահույթ

- 2021 թվականի 1-ին եռամսյակում Հայաստանում գործող բանկերի ընդհանուր զուտ շահույթը կազմում է **19.4 մլրդ ՀՀ դրամ,** ինչը **4 մլրդ ՀՀ դրամով (17%-ով)** քիչ է 2020 թվականի 1-ին եռամսյակում գրանցած արդյունքից:
- Նշված նվազման հիմնական պատճառն է վարկային կորուստների պահուստին կատարված զուտ մասհանումների էական աճը, որը կազմել է **7.5 մլրդ ՀՀ դրամ (55%)**:



Ընդհանուր ակտիվներ

- Բանկային համակարգի ընդհանուր ակտիվները 2021թ. 1-ին եռամսյակում մնացել են գրեթե անփոփոխ (աճ 0.2%):

- Առ 31.03.2021, ընդհանուր ակտիվները կազմել են **6,659 մլրդ ՀՀ դրամ**:



Ընդհանուր ակտիվներ

- Ամենախոշոր **5** բանկերի *(Ամերիաբանկ, ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ, Արդշինբանկ, ԱԿԲԱ ԲԱՆԿ, Ինեկոբանկ)* ընդհանուր ակտիվները կազմում են բանկային համակարգի ընդհանուր ակտիվների **56%:**
- Ամենախոշոր **3** բանկերի *(Ամերիաբանկ, ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ, Արդշինբանկ)* ընդհանուր ակտիվները կազմում են բանկային համակարգի ընդհանուր ակտիվների **43%:**
- Ամերիաբանկի մասնաբաժինը ամենամեծն է՝ **15.2%**.

Ընդհանուր ակտիվների կենտրոնացումը ըստ բանկերի առ 31.03.21



Ընդհանուր վարկային պորտֆել

- Բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելը 2021թ. 1-ին եռամսյակում նվազել է 0.9%-ով:
- Առ 31.03.2021 ընդհանուր վարկային պորտֆելը հավասար է **4.017 մլրդ ՀՀ դրամ** և կազմում է ընդհանուր ակտիվների **60%:**
- Նշված ընդհանուր վարկային պորտֆելը ներառում է մանրածախ և կորպորատիվ վարկեր:

Բանկերի վարկային պորտֆելի դինամիկան 1-ին եռամսյակ 2021 թ. (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր վարկային պորտֆել

- Ամենախոշոր **5** բանկերի *(Ամերիաբանկ, ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ, Արդշինբանկ, ԱԿԲԱ ԲԱՆԿ, Կոնվերս Բանկ)* ընդհանուր վարկային պորտֆելները կազմում են բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելի **61.4%:**
- Ամենախոշոր **3** բանկերի *(Ամերիաբանկ, ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ, Արդշինբանկ)* ընդհանուր վարկային պորտֆելները կազմում են բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելի **47.5%:**
- Ամերիաբանկի մասնաբաժինը ամենամեծն է՝ **17.2%:**

Ընդհանուր վարկային պորտֆելի կենտրոնացումը ըստ բանկերի առ 31.03.21



Ընդհանուր պարտավորությունները

- Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունները 2021թ. 1-ին եռամսյակում մնացել են գրեթե անփոփոխ (նվազում 0.02%):

- Առ 31.03.2021, ընդհանուր պարտավորությունները կազմել են **5.746 մլրդ ՀՀ**:



Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ

- Բանկային համակարգի **ընդհանուր** ընթացիկ հաշիվների մնացորդները և ժամկետային ավանդները 2021թ. 1-ին եռամսյակում մնացել են գրեթե անփոփոխ (նվազում 0.6%):

- Առ 31.03.2021, **ընդհանուր** ընթացիկ հաշիվների մնացորդները և ժամկետային ավանդները հավասար են **3.543 մլրդ ՀՀ դրամ** և կազմում են ընդհանուր պարտավորությունների **62%:**



Պարտատոմսեր

- Բանկային համակարգի կողմից թողարկված պարտատոմսերի մնացորդը աճել է 2021թ. 1-ին եռամսյակում **24 մլրդ ՀՀ դրամով,** կամ **6%**:
- **17** գործող բանկերից պարտատոմսեր թողարկել են **12-ը**:
- Նշված գործիքի կիրառումը խրախուսում է ՀՀ ԿԲ և սահմանում 8 անգամ ավելի ցածր պարտադիր պահուստավորման նորմատիվ, քան ներգրավված ավանդների դեպքում:



Ընդհանուր կապիտալ

- 2021թ. 1-ին եռամսյակի ընթացքում Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալը աճել է **16.3 մլրդ ՀՀ դրամով**, կամ **2%** ու կազմել **913 մլրդ ՀՀ դրամ**:
- Կանոնադրական կապիտալը (ներառյալ էմիսիոն եկամուտը) աճել է **370 մլն ՀՀ դրամով** *(ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ – 261.5 մլն ՀՀ դրամ և Ամերիաբանկ – 108.5 մլն ՀՀ դրամ)*:
- Վերագնահատման պահուստները նվազել են **3.3 մլրդ ՀՀ դրամ**, կամ **7%**:

Բանկերի ընդհանուր կապիտալը (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր կապիտալ

- Առ 31.03.2021թ. **կանոնադրական կապիտալը** (ներառյալ էմիսիոն եկամուտը) կազմում է Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **58%**-ը և հավասար է **534 մլրդ ՀՀ դրամ**:
- Առ 31.03.2021թ. **կուտակված շահույթը** (ներառյալ գլխավոր պահուստը) կազմում է Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **37**%-ը և հավասար է **337.7** մլրդ ՀՀ դրամ:
- Առ 31.03.2021թ. **վերագնահատման պահուստները** կազմում են Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **5%**-ը և հավասար են **41** մլրդ ՀՀ դրամ:

Ընդհանուր կապիտալի տարրերը առ 31.03.2021



Կուտակված շահույթ (վնաս)

- Սույն վերլուծության համար ավելի նպատակահարմար է կուտակված շահույթը/վնասը դիտարկել գլխավոր պահուստի հետ միասին:
- 2021թ. 1-ին եռամսյակի ընթացքում Հայաստանի բանկային համակարգի կուտակված շահույթը/վնասը (ներառյալ գլխավոր պահուստը) աճել է **19.2 մլրդ ՀՀ դրամով**, կամ **6%,** կազմելով **337.7 մլրդ ՀՀ դրամ**:
- Բացի ՎՏԲ-Հայաստան բանկից մնացած բանկերը ունեն կուտակված շահույթ:
- Շահաբաժին (դիվիդենտ) հայտարարագրել են երկու բանկ՝ ընդհանուր գումարով **259 մլն ՀՀ դրամ** (ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ – 220 մլն ՀՀ դրամ և Արդշինբանկ – 39 մլն ՀՀ դրամ):

Կուտակված շահույթ /վնաս *(մլն ՀՀ դրամ)*



RUMELS MANAGEMENT SOLUTIONS

RUMELS Management Solutions

Ամիրյան 1 (Արմենիա Մարիոթ Հյուրանոց,
գրասենյակ N 320),
0010, Երևան, Հայաստան

Հեռ՝ +374 60 73 79 09

Էլ. հասցե՝ info@rumels.am

Կայք՝ www.rumels.am